



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 սեպտեմբերի 2025 թվականի N 2038

ՄԱՐԶ ԼՈՐԻ, ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱԶՈՐ ԳՅՈՒՂ ՇԱՀՈՒՄՅԱՆՈՒՄ (ՀՈՂԱՄԱՍԻ
ԾԱԾԿԱԳԻՐ՝ 06-084-0448-0062) ԳՏՆՎՈՂ «ԷԿՈ ՏՈՒՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ
ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻՆ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԷԿՈ ՏՈՒՐ» ՍՊԸ-ի տնօրեն Նաիրի Մանուկյանի 29.04.2024թ. թիվ 01/7864 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 11052023-06-0111 վկայականը, Վանաձոր համայնքի 05.03.2025 թվականի ավագանու ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին թիվ 7-Լ որոշումը /գլխավոր հատակագիծ/, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 12.08.2024 թվականին տրված թիվ 2-14 դրական եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2011թ. 1920-Ն որոշման N1 հավելվածի 24-րդ կետի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 02.04.2015թ.-ի թիվ 412-Ն որոշման 1-ին կետի ը. ենթակետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Համապատասխանեցնել մարզ Լոռի, համայնք Վանաձոր գյուղ Շահումյանում (հողամասի ծածկագիր՝ 06-084-0448-0062) գտնվող, «ԷԿՈ ՏՈՒՐ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 0.004հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները Վանաձոր համայնքի 05.03.2025 թվականի ավագանու ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին թիվ 7-Լ որոշմանը /գլխավոր հատակագիծ/, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 12.08.2024 թվականին տրված թիվ 2-14 դրական եզրակացությանը և հաստատել որպես բնակավայրերի նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողեր:

2. Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները համապատասխանում է Վանաձոր համայնքի 05.03.2025 թվականի ավագանու ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին թիվ 7-Լ որոշմանը /գլխավոր հատակագիծ/, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 12.08.2024 թվականին տրված թիվ 2-14 դրական եզրակացությանը, բավարարում է ՀՀ կառավարության 02.04.2015թ.-ի թիվ 412-Ն որոշման 1-ին կետի ը. ենթակետի պահանջներին և ենթակա է գրանցման որպես բնակավայրերի նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողամաս:

3. «ԷԿՈ ՏՈՒՐ» ՍՊԸ-ին վճարել (75108-590) 74518 (յոթանասունչորս հազար մեկ հարյուր ութ) ՀՀ դրամ 40.0քմ մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները համապատասխանեցնելուց առաջացած կադաստրային արժեքի տարբերությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ սեպտեմբերի 01
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 սեպտեմբերի 2025 թվականի N 2039

ՄԱՐԶ ԼՈՐԻ, ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱԶՈՐ ԳՅՈՒՂ ՇԱՀՈՒՄՅԱՆՈՒՄ (ՀՈՂԱՄԱՍԻ
ԾԱԾԿԱԳԻՐ՝ 06-084-0447-0054) ԳՏՆՎՈՂ «ԷԿՈ ՏՈՒՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻՆ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԷԿՈ ՏՈՒՐ» ՍՊԸ-ի տնօրեն Նաիրի Մանուկյանի 08.09.2022թ. թիվ 01/10843 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 06092022-06-0034 սկայականը, Վանաձոր համայնքի 05.03.2025 թվականի ավագանու ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին թիվ 7-Լ որոշումը /գլխավոր հատակագիծ/, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 12.08.2024 թվականին տրված թիվ 2-14 դրական եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2011թ. 1920-Ն որոշման N1 հավելվածի 24-րդ կետի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 02.04.2015թ.-ի թիվ 412-Ն որոշման 1-ին կետի ը. ենթակետով, **որոշում եմ.**

1. Համապատասխանեցնել մարզ Լոռի, համայնք Վանաձոր գյուղ Շահումյանում (հողամասի ծածկագիր՝ 06-084-0447-0054) գտնվող, «ԷԿՈ ՏՈՒՐ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 0.0035 հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները Վանաձոր համայնքի 05.03.2025 թվականի ավագանու ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին թիվ 7-Լ որոշմանը /գլխավոր հատակագիծ/, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 12.08.2024 թվականին տրված թիվ 2-14 դրական եզրակացությանը և հաստատել որպես բնակավայրերի նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողեր:

2. Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները համապատասխանում է Վանաձոր համայնքի 05.03.2025 թվականի ավագանու ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին թիվ 7-Լ որոշմանը /գլխավոր հատակագիծ/, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 12.08.2024 թվականին տրված թիվ 2-14 դրական եզրակացությանը, բավարարում է ՀՀ կառավարության 02.04.2015թ.-ի թիվ 412-Ն որոշման 1-ին կետի ը. ենթակետի պահանջներին և ենթակա է գրանցման որպես բնակավայրերի նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողամաս:

3.«ԷԿՈ ՏՈՒՐ» ՍՊԸ-ին վճարել (65719.5-516.5) 65203 (վաթսունհինգ հազար երկու հարյուր երեք) ՀՀ դրամ 35.0քմ մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները համապատասխանեցնելուց առաջացած կադաստրային արժեքի տարբերությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 01
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 սեպտեմբերի 2025 թվականի N 2040

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱԹՈՒՄԻ ՓՈՂՈՑ 18/3
ՀԱՍՅԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լիլա Մանթաշի Հակոբյանի և Արտյոմ Սերիկի Ղազարյանի 18.08.2025 թվականի թիվ 02/11720 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 13032023-06-0045 վկայականը, «Տարոն Վարդանյան Արտուրի» ԱԶ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, 18.08.2025 թվականի հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման տեղեկանքը /ծածկագիր: 2025SCRJKP/, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով՝ որոշում եմ.

1. Հաստատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Բաթումի փողոց 18/3 հասցեում գտնվող 0.046 հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 01
Ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 սեպտեմբերի 2025 թվականի N 2041

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՔԻՄԻԱԳՈՐԾՆԵՐԻ 2-ՐԴ
ՓՈՂՈՑ ԹԻՎ 35 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԱՐԱՄԱՅԻՍ ԻՍԿԱՆԴԱՐԻ ՍԱՔԱՆՅԱՆԻ ԵՎ ԱՐՍԵՆ ԻՍԿԱՆԴԱՐԻ
ՍԱՔԱՆՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ
ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արսեն Իսկանդարի Սաքանյանի և Արամայիս Իսկանդարի Սաքանյանի կողմից լիազորված անձ Սերինե Արամայիսի Սաքանյանի 26.12.2024թ. թիվ 02/21915 դիմումը, 20.11.2023 թվականին տրված թիվ 6559 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 741-20231120-90-7484382), 18.04.1988թ. տրված տեխնիկական անձնագիրը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒՂԻԿԻ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /238724/, 26.05.2025 թվականին «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-127/25 Ի եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Քիմիագործների 2-րդ փողոց թիվ 35 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 389քմ մակերեսներով հողամասը, դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1959-1996թթ-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 389քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1.Ճանաչել Արսեն Իսկանդարի Սաքանյանի(1/2) և Արամայիս Իսկանդարի Սաքանյանի(1/2) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի, Քիմիագործների 2-րդ փողոց թիվ 35 հասցեի 389քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

2. Հաստատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Քիմիագործների 2-րդ փողոց թիվ 35 հասցեի բնակելի տան զբաղեցրած 389 քմ մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:


3. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Քիմիագործների 2-րդ փողոց թիվ 35 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Քիմիագործների 2-րդ փողոց, 35 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 01
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 սեպտեմբերի 2025 թվականի N 2042

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑ
97/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀՈՂԱՄԱՍԻ ԸՆԴԱՅՆՄԱՆ
ՆՊԱՏԱԿՈՎ ՍԱՄՎԵԼ ՍԱՄՎԵԼԻ ՊԱՊԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կարեն Սամվելի Պապանյանի 15.03.2023 թվականի թիվ 02/4035 դիմումը, որ
հանդիսանում է Սամվել Սամվելի Պապանյանի լիազորված անձը, 10.03.2023թ. տրված թիվ
77ԱԴ1235334 (նոտարական ակտի կոդ: 594-20230314-64-6752864) լիազորագրի ռուսերենից
հայերեն թարգմանությունը, Սամվել Սամվելի Պապանյանի անվամբ անշարժ գույքի
նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 24102017-06-0001 և Վանաձոր
համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ
14042025-06-0020 վկայականները, Վանաձոր համայնքի ավագանու 26 ապրիլի 2023
թվականի թիվ 34 որոշումը /14 կետ/, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»
ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի
1-ին մասի 3-րդ, 4-րդ կետերով և 2-րդ մասով, ՀՀ կառավարության 26.05.2016թ. թիվ 550-Ն
որոշման 1-ին և 2-րդ կետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Զորավար Անդրանիկի փողոց 97/5 հասցեում
գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող,
Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող 39.96 քմ մակերեսով հողամասը,
համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների
պետական գրանցման թիվ 14042025-06-0020 վկայականի, հողի կադաստրային արժեքով՝
273100/ երկու հարյուր յոթանասուն երեք հազար հարյուր/ ՀՀ դրամով ուղղակի վաճառքի ձևով
օտարել՝ Սամվել Սամվելի Պապանյանին հողամասի ընդլայնման նպատակով:

2. Վանաձորի համայնքի ղեկավարի պաշտոնակատարին՝ Սամվել Սամվելի Պապանյանի հետ
ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 39.96 քմ մակերեսով հողամասի
առուվաճառքի պայմանագիր, իսկ համայնքի աշխատակազմի եկամուտների հավաքագրման,
հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 սեպտեմբերի 2025 թվականի N 2043

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱՆԱԿԻ ՓՈԴՈՑ 1-ԻՆ
ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 14 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՍԵՐՅՈԺԱ ՎԱԶԳԵՆԻ ՆԱՀԱՊԵՏՅԱՆԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ
ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սերյոժա Վազգենի Նահապետյանի 09.02.2024թ. թիվ 02/2888 դիմումը, 10.12.1952թ. տրված գույքային թերթը, 13.18.2025 տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 5029 վկայագիրը (նոտարական ակտի կոդ: 594-20230916-84-7299605), «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 13.08.2025թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-196/25 Ի եզրակացությունը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման /251939/ քաղվածքը, «Գասպար Վեքիլյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Բանակի փողոց 1-ին փակուղի թիվ 14 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 113.8քմ մակերեսով հողամասը, դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերմիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1942-1980թթ-ին, դրա զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 113.8քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ**:

1. Ճանաչել Սերյոժա Վազգենի Նահապետյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Բանակի փողոց 1-ին փակուղի թիվ 14 հասցեի 113.8 քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

2. Հաստատել Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Բանակի փողոց 1-ին փակուղի թիվ 14 հասցեում գտնվող 0.01138հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն

համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի: Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3.Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Բանակի փողոց 1-ին փակուղի թիվ 14 հասցեում գտնվող գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք Վանաձոր ք., Բանակի փողոց, 1-ին փակուղի, 14 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 01
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 սեպտեմբերի 2025 թվականի N 2044

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 24 ՀՈՒՆՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 122 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 18 ՀՈՒՆԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1687 ՈՐՈՇՈՒՄԸ ՈւժԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 24.01.2023 թվականի թիվ 122 որոշումը, 24.07.2025 թվականի ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-24072025-06-0098 որոշումը, «Գալստար Վեքիլյան» ԱԶ-ի կողմից տրված հողմասի նոր հատակագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 24 հունվարի 2023 թվականի «Վանաձոր քաղաքի Ազատամարտիկների (նախկին Հոկտեմբերյանի) փողոց թիվ 17 հասցեի բնակելի տան ու հողամասի նկատմամբ Մարատ Միքայելի Մկրտչյանի և Սամվել Միքայելի Մկրտչյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը ճանաչելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 122 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները.

1. Որոշման նախաբանում «783.5քմ» թվերը փոխարինել «773.57» թվերով և «391.75քմ (783.5 : 2)» թվերը փոխարինել «386,785քմ (773.57 : 2)» թվերով

2. Որոշման նախաբանում «դրա կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 783.5քմ մակերեսով հողամասը հանդիսանում է ըդհանուր համատեղ սեփականություն կից տնատիրության հետ: Մարատ Միքայելի Մկրտչյանի և Սամվել Միքայելի Մկրտչյանի բաժնեմասը կազմում է 391.75քմ (783.5 : 2)» բառերը փոխարինել հետևյալ բառերով՝ «դրա կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 773.57 քմ մակերեսով հողամասը հանդիսանում է ըդհանուր համատեղ սեփականություն Մարատ և Սամվել Մկրտչյանների և Ազատամարտիկների փողոց 17 հասցեի սեփականատեր Արմենակ Սիրեկանի Շահինյանի տնատիրության հետ, Մարատ և Սամվել Մկրտչյանների բաժնեմասը կազմում է 386,785քմ (773.57 : 2)» :

3.Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 18 հուլիսի 2025 թվականի «Վանաձոր համայնքի ղեկավարի 24 հունվարի 2023 թվականի թիվ 122 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» թիվ 1687 որոշումը :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

2025թ. սեպտեմբերի 01
ք.Վանաձոր



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 սեպտեմբերի 2025 թվականի N 2045

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ, ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ ԹԱՂ ԹԻՎ 8/43
ՀԱՍՑԵՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Միեր Ռաֆիկի Ավագյանի 08.05.2023 թվականի թիվ 7360 դիմումը, Վանաձոր համայնքի ավագանու 05.03.2025 թվականի «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին» թիվ 7-Լ որոշումը (գլխավոր հատակագիծ), Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1873312 վկայականը, 29.11.2023 թվականի Վանաձոր համայնքի ավագանու թիվ 46 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել օրինական Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Ներսիսյան թաղ թիվ 8/43 հասցեում գտնվող, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 22.0քմ մակերեսով բնակելի գործառնական նշանակությամբ ավտոտնակը:

2. Վանաձոր քաղաքի Ներսիսյան թաղ թիվ 8/43 հասցեում գտնվող ավտոտնակի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 0.0022 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը համապատասխանեցնել Վանաձոր համայնքի ավագանու 05.03.2025 թվականի «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին» թիվ 7-Լ որոշմամբ (գլխավոր հատակագիծ) նշված հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման հողերի:

3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով

սահմանված հողամասերի թվին չդասվող 22,0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնական կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու վերաբերյալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 01
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 սեպտեմբերի 2025 թվականի N 2046

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ՇԱՀՈՒՄՅԱՆՈՒՄ (ԾԱԾԿԱԳԻՐ: 06-084-0056-0005) ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արսեն Վահեի Քոչարյանի 06.08.2025 թվականի թիվ 02/11105 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 13012023-06-0031 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման /254002/ քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ**.

Վանաձոր համայնքի, գյուղ Շահումյանում (ծածկագիր: 06-084-0056-0005) գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Շահումյան, 10-րդ փողոց, 4/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 01
Ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 սեպտեմբերի 2025 թվականի N 2047

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 16 ՀՈՒՆԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1380
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վերոնիկ Հակոբի Իսրաելյանի լիազորված անձ Գառնիկ Հարությունի Ավագյանի 25.07.2025թ. թիվ 02/10524 դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 16 հունսի 2025 թվականի թիվ 1380 որոշումը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 11.07.2025թ. տրված գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-11072025-06-0191 որոշումը, «ԿԱՐՏՈԳՐԱՖ» ԱԶ-ի կողմից տրված «ԿԱՐՏՈԳՐԱՖ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների նոր հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 16 հունսի 2025 թվականի «Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Խնձորուտ թաղ. 1-ին փողոց թիվ 47 հասցեի բնակելի տանը կից հողամասի և դրա վրա գտնվող շինությունների նկատմամբ Վերոնիկ Հակոբի Իսրաելյանի սեփականության իրավունքը ճանաչելու, հողամասի ճշտված սահմանները հաստատելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1380 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները.

1. Որոշման նախաբանը «սեփականություն» բառից հետո լրացնել «Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Խնձորուտ թաղ. 1-ին փողոց թիվ 47 հասցեում գտնվող, Վերոնիկ Հակոբի Իսրաելյանին և Գագիկ Հայկի Իսրաելյանին պատկանող» բառերով:
2. Որոշման 1-ին կետը «սեփականություն» բառից հետո լրացնել «Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Խնձորուտ թաղ. 1-ին փողոց թիվ 47 հասցեում գտնվող, Վերոնիկ Հակոբի Իսրաելյանին և Գագիկ Հայկի Իսրաելյանին պատկանող» բառերով:
3. Որոշման 2-րդ կետի, 2-րդ պարբերությունը «գտնվող» բառից հետո լրացնել «Վերոնիկ Հակոբի Իսրաելյանին և Գագիկ Հայկի Իսրաելյանին պատկանող» բառերով:
4. Վանաձոր համայնքի ղեկավարի 07 մայիսի 2025 թվականի թիվ 1380 որոշման հավելվածը փոխարինել Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից հաստատված նոր հավելվածով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 սեպտեմբերի 2025 թվականի N 2048

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 04 ՀՈՒՆՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 21
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 07 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1898 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հրաչյա Ալեքսանյանի 24.01.2024թ. թիվ 02/1567 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 2038794 վկայականը, 12.05.2017թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 1197 վկայագիրը (նոտարական ակտի կոդ: 763-20170512-84-1247447), 25.06.2018թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 2359 վկայագիրը (նոտարական ակտի կոդ: 763-20180625-153-2669355), 23.01.2024 թ. գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-23012024-06-0154, 18.08.2025թ. գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-18082025-06-0183 որոշումները, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱԶ-ի կողմից տրված հատակագիծը, հողամասի հատակագիծը և շինությունների բնութագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ և 37-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 04 հունվարի 2024 թվականի «Վանաձոր համայնքի գյուղ Գուգարք, 10-րդ փողոց, թիվ 36 հասցեում գտնվող Հրաչյա Ալեքսանդրի Ալեքսանյանին, Գառնիկ Հրաչյայի Ալեքսանյանին, Թագուհի Ալեքսանդրի Ալեքսանյանին, Արմինե Հրաչյայի Ալեքսանյանին, Լարիսա Զավենի Չոբանյանին, Նազիկ Ալեքսանդրի Ալեքսանյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնակամ կառուցված բնակելի նշանակության շինություններն օրինականացնելու, հողամասի ճշտված սահմանները հաստատելու և փոխադրելու հասցե տրամադրելու մասին» թիվ 21 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները.

1.Որոշման 1-ին կետը «չառաջանող» բառից հետո լրացնել «0.175177 ընդհանուր մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության շինությունների վրա կառուցված ինքնակամ կատարված 10 ձևափոխությունները, համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի» բառերով:

2.Որոշման 3-րդ կետը «դրամ» բառից հետո լրացնել «և թվով 10 ինքնակամ ձևափոխությունների օրինականացման համար սահմանված վճարը՝ 14220 /տասնչորս հազար երկու հարյուր քսան/

ՀՀ դրամ գումարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած» բառերով:

3. Ուժը կորցրած ճանաչել Վանաձորի համայնքի ղեկավարի 07 օգոստոսի 2025 թվականի «Վանաձոր համայնքի ղեկավարի 04 հունվարի 2024 թվականի թիվ 21 որոշման մեջ լրացում կատարելու մասին» թիվ 1898 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 01
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 սեպտեմբերի 2025 թվականի N 2049

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱԹՈՒՄԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 15
ՇԵՆՔԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ
ԱՎՏՈՏՆԱԿԻ, ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ
ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սամվել Պավլենյի Բաղդասարյանի լիազորված անձ Աննա Սամվելի
Բաղդասարյանի 08.12.2023թ. թիվ 02/21894 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ
տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող
կազմակերպությունների եզրակացությունները, 27.07.2023 թվականին տրված թիվ 5637
լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 763-20230727-90-7151238), «Գասպար Վեքիլյան»
ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների
բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 19.10.2023թ. թվականին տրված հաշվառման
(չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման
ծածկագիր: 2023YFB2SL), 07.08.2024 թվականի «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից
տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ Վն 1-107/24ա
եզրակացությունը, 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը,
ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված
կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի
33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ
հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր
քաղաքի Բաթումի փողոց թիվ 15 շենքի հարավային մասում գտնվող ինքնակամ կառուցված,
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման
պայմաններին համապատասխանող 51.08քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ընդհանուր
ներքին մակերեսը՝ 46.53քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար
անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին
չդասվող 33.3 քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական
նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման,
հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու

մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքով օտարելու վերաբերյալ:

5.Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Բաթումի փողոց թիվ 15 շենքի հարավային մասում գտնվող ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Բաթումի փողոց, 15/16 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 01
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 սեպտեմբերի 2025 թվականի N 2050

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ ԹԱՂԱՄԱՍ ԹԻՎ
14 ՇԵՆՔԻ ՀԵՏՆԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ, ԵՎ
ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՁԵԼՈՒ,
ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սուրեն Լեոնիդի Հարությունյանի 25.12.2023թ. թիվ 02/23055 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «ԿԱՐՏՈԳՐԱՖ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 22.12.2023 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 20234GFGAP), 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Ներսիսյան թաղամաս թիվ 14 շենքի հետնամասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 23.8քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 22.82քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 23.8քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնական կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքով օտարելու վերաբերյալ:

5. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի, Ներսիսյան թաղամաս թիվ 14 շենքի հետնամասում գտնվող ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Հ. Ներսիսյան փողոց, 14/5 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 01
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 սեպտեմբերի 2025 թվականի N 2051

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԻ ԽՃՈՒՂԻ 12/2 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ, ԵԼԵՆԱ ԱՇՈՏԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ելենա Աշոտի Սարգսյանի 28.04.2025թ. թիվ 02/5782 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 24032025-06-0046 վկայականը, 27.03.2025 թ. տրված «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-129/25 Ի եզրակացությունը, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, բնութագիրը, եզրակացությունը, 16.07.2025թ. ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 20254DMSJA), 21.04.2025 թվականին տրված մասնագիտական եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 17-րդ կետերով, 18-րդ կետի ա) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել օրինական Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Շիրակի խճուղի 12/2 հասցեում գտնվող, Ելենա Աշոտի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող ինքնական կառուցված 127.7քմ ընդհանուր արտաքին (ներքին մակերես՝ 123.4քմ) մակերեսով բնակելի նշանակության շինությունները՝ ըստ «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների բնութագրերի:

2. Ելենա Աշոտի Սարգսյանի կողմից օրինականացման համար սահմանված վճարը՝ 127.7քմ ընդհանուր արտաքին (ներքին մակերես՝ 123.4քմ) մակերեսով բնակելի տան համար՝ 251 450 (երկու հարյուր հիսունմեկ հազար չորս հարյուր հիսուն) ՀՀ դրամ՝ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՄԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 սեպտեմբերի 2025 թվականի N 2052

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 3Ե
ՀԱՍՑԵԻ ԱՐԵՎԱՏՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՎԱԾ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՐ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արթուր Էդիկի Մանուկյանի 27.12.2023 թ. թիվ 02/23278 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 14.11.2023թ. թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (ծածկագիր: 2023TYPKLM), «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, 21.10.2022 թվականի «Վանաձոր նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական փնձակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-137/22ի եզրակացությունը, 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Մյասնիկյան փողոց թիվ 3Ե հասցեի արևմտյան մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 12.25 քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 7.48քմ)\ շինությունները և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 28.97քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված

շինությունները և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին շինությունները և հողամասը ուղղակի վաճառքով օտարելու վերաբերյալ:

5. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Մյասնիկյան փողոց թիվ 3ե հասցեի արևմտյան մասում գտնվող խանութին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Ա. Մյասնիկյան փողոց, 3/6 խանութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 01
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 սեպտեմբերի 2025 թվականի N 2053

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 09 ՀՈՒՎԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1598
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմքը ընդունելով Նարինե Վազգենի Առաքելյանի 08.08.2025թ թիվ 02/11214 դիմումը, ՀՀ կադաստրի կոմիտեի 07/08/2025 թվականին տրված գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-07082025-06-0176 որոշումը, 09 հուլիսի 2025 թվականի 1598 որոշումը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 09 հուլիսի 2025 թվականի «Վանաձոր քաղաքի, Տավրոս (Նախկին Ժդանով) թաղամաս 17-րդ փողոց, թիվ 5 հասցեի բնակելի տանը կից հողամասի և դրա վրա գտնվող շինությունների նկատմամբ Նարինե Վազգենի Առաքելյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը ճանաչելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1598 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1.Որոշման վերնագրում, որոշման նախաբանում, որոշման մեջ՝ 1-ին և 2-րդ կետերում՝ «բաժնային» բառը փոխարինել «համատեղ» բառով:

2.Որոշման նախաբանը «ՀՀ օրենքով» բառերից հետո լրացնել «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածով» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 սեպտեմբերի 2025 թվականի N 2054

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ 1 ԱՎԱՆ 25
ՏՈՒՆ (ՊԱՅՄԱՆԱԿԱՆ) ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼՎԱՐԴ ԱՐԱՐԱՏԻ ԱՎԵՏՅԱՆԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ
ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալվարդ Արարատի Ավետյանի 24.06.2025թ. թիվ 02/8824 դիմումը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 29.07.2025թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-180/24 Ի եզրակացությունը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման /244338/ քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 10.06.2025թ. տրված փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը, 28.07.2025թ. թիվ 4496 (նոտարական ակտի կոդ: 594-20250728-66-9232455), թիվ 4497 (նոտարական ակտի կոդ: 594-20250728-66-9232425) և 4498 (նոտարական ակտի կոդ: 594-20250728-66-9232448) հայտարարությունները, «Գասպար Վեքիլյան» Աձ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Բուլղարական 1 ավան 25 տուն (պայմանական) հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 91.2քմ մակերեսով հողամասը, դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1991 թ-ին, դրա զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 91.2քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Ալվարդ Արարատի Ավետյանին սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Բուլղարական 1 ավան 25 տուն հասցեի 91.2 քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

2. Հաստատել Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Բուլղարական 1 ավան 25 տուն հասցեում գտնվող 0.00912 հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի: Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Բուլղարական 1 ավան 25 տուն հասցեում գտնվող գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք Վանաձոր ք., Բուլղարական ավան 1-ին թաղամաս, 25 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 01
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 սեպտեմբերի 2025 թվականի N 2055

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ
ԹԵՎՈՍՅԱՆ 2 - ՐԴ ՓՈՂՈՑ 67 Բ, 3 (ՆԱՐԵԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ 67 Բ 3)
(ՊԱՅՄԱՆԱԿԱՆ) ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՈՒ
ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԻԼԻԿ ՄԱՆԹԱՇԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վիլիկ Մանթաշի Բարսեղյանի (ծնված՝ 15.02.1954թ.) 25.07.2024թ. թիվ 02/12779 դիմումը, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին թիվ 7-Լ որոշումը /գլխավոր հատակագիծ/, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 12.08.2024 թվականին տրված թիվ 2-14 դրական եզրակացությունը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /242385/, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 01.07.2025թ. տրված՝ թիվ 3526 (նոտարական ակտի կոդ: 741-20250701-66-9143829), 01.07.2025թ. տրված՝ թիվ 3527 (նոտարական ակտի կոդ: 741-20250701-66-9143844), 01.07.2025թ. տրված՝ թիվ 3528 (նոտարական ակտի կոդ: 741-20250701-66-9143778), հայտարարությունները, 13.02.2020 թվականին տրված մահվան մասին թիվ ԲԱ222532 վկայականը, 09.12.1976թ թիվ 343228 ամուսնության վկայականը, Փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը, 11.09.2024թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-304/24 Ի եզրակացությունը, 29.12.2023թ. ՀՀ կադաստրի կոմիտեի տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023ՍՍԾԾԳԵ), ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր համայնքի վարչական սահմաններում՝ Վանաձոր քաղաքի Թևոսյան 2-րդ փողոց 67 Բ, 3 (Նարեկացու փողոց 67 Բ 3) (պայմանական) հասցեում կառուցված բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 330.07քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1989-

2019թ., դրա կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 330.07քմ մակերեսով հողամասը զբաղեցվել և շահագործվում է սկսած 1989թ.-ից:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 9-րդ, 11-րդ, 12-րդ, 14-րդ մասերով, ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1918-Ն, 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշումները, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ որոշում եմ.

1. Համապատասխանեցնել Վանաձոր համայնքի վարչական սահմաններում՝ Վանաձոր քաղաքի Թևոսյան 2-րդ փողոց 67 բ, 3 (Նարեկացու փողոց 67 բ 3) (պայմանական) հասցեի 0.033007 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության արդյունաբերական օբյեկտների հողերից բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողերի՝ համաձայն ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին թիվ 7-Լ որոշման /գլխավոր հատակագիծ/, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 12.08.2024 թվականին տրված թիվ 2-14 դրական եզրակացության:

2. Ճանաչել Վիլիկ Մանթաշի Բարսեղյանի (ծնված՝ 15.02.1954թ.) սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր համայնքի վարչական սահմաններում՝ Վանաձոր քաղաքի Թևոսյան 2-րդ փողոց 67 բ, 3 (Նարեկացու փողոց 67 բ 3) (պայմանական) հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 330.07քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ՝ բացառությամբ 15.05.2001թ.-ից հետո ինքնակամ կառուցված 33.89քմ մակերեսով բնակելի տուն 1-ին հարկից, 18.96քմ մակերեսով բնակելի տուն 1-ին հարկից և 4.75քմ մակերեսով մառանից:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով և ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին թիվ 7-Լ որոշումով /գլխավոր հատակագիծ/:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ս. Թևոսյան փողոց, 1-ին նրբանցք, 23/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 սեպտեմբերի 2025 թվականի N 2056

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 15 ՄԱՅԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1124
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կարինե Սեդրակի Բաղրամյանի լիազորված անձ Սուսաննա Լյուդվիկի Բաղրամյանի 31.07.2025 թվականի թիվ 01/10776 դիմումը, 16.07.2025թ. տրված թիվ 3721 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ:843-20250716-90-9194732), 10.07.2025թ տրված ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-10072025-06-0177 որոշումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 15 մայիսի 2025 թվականի թիվ 1124 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով՝ որոշում եմ.

Վանաձոր համայնքի ղեկավարի 15 մայիսի 2025 «Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Սունդուկյան փողոց թիվ 76 հասցեում գտնվող բնակելի տան նկատմամբ Կարինե Սեդրակի Բաղրամյանի սեփականության իրավունքը ճանաչելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1124 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1.Որոշման 3-րդ կետում «ընդհանուր օգտագործման» բառերը փոխարինել «ընդհանուր համատեղ սեփականություն» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



 Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 01
Ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 սեպտեմբերի 2025 թվականի N 2057

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ՇԱՀՈՒՄՅԱՆՈՒՄ (ԾԱԾԿԱԳԻՐ: 06-084-0309-0009) ԳՏՆՎՈՂ ԷԼՄԻՐԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էլմիրա Համբարձումի Գևորգյանի 21.11.2024թ. թիվ 02/19754 դիմումը, 29.08.2024թ. տրված քաղվածքը և ցուցակը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 20.11.2024թ. ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2024XZEECL), «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, 16.06.2025թ. տրված եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 16-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Վանաձոր համայնքի գյուղ Շահումյանում (ծածկագիր: 06-084-0309-0009) գտնվող զբաղեցրած 0.30005 հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 02
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 սեպտեմբերի 2025 թվականի N 2084

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Կ. ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ 7/3
ՀԱՅՅԵՌԻՄ ԴՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՃԱՆԱԶՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԼԵՏ
ՎՈԼՈՂՅԱՅԻ ԻՍԴԻՐՅԱՆԻ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Համլետ Վոլոդյայի Իսպիրյանի 31.10.2023 թվականի թիվ 18948 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25022025-06-0010 վկայականը, 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով և 36-րդ կետով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Կ. Դեմիրճյան փողոց 7/3 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 29.67քմ մակերեսով ավտոտնակը 80860 (ութսուն հազար ութ հարյուր վաթսուն) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 30.0քմ մակերեսով հողամասը 315420 (երեք հարյուր տասնհինգ հազար չորս հարյուր քսան) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Համլետ Վոլոդյայի Իսպիրյանին:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Համլետ Վոլոդյայի Իսպիրյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 02
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 սեպտեմբերի 2025 թվականի N 2085

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՍԱՆԿՏ-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՓՈՂՈՑ
5/8 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Պավելի Ալավերդյանի 03.07.2025 թվականի թիվ 02/9297 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 26022025-06-0016 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով՝ **որոշում եմ**.

1. Փոխել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Սանկտ-Պետերբուրգի փողոց 5/8 հասցեում գտնվող Արմեն Պավելի Ալավերդյանին սեփականության իրավունքով պատկանող 0.039312 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 02
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 սեպտեմբերի 2025 թվականի N 2086

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ 68/5
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ
ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐԱԽԿ ՀՐԱՋԻԿԻ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 03
ՀՈՒԼԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1563 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արաիկ Հրաչիկի Մարտիրոսյանի 16.11.2023 թվականի թիվ 02/20197 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 24032025-06-0017 վկայականը, 13.05.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի 68/5 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 18.0քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 17.11քմ) ավտոտնակը 30120 (երեսուն հազար հարյուր քսան) ՀՀ դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 18.0քմ մակերեսով հողամասը 51980 (հիսունմեկ հազար ինը հարյուր ութսուն) ՀՀ դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Արաիկ Հրաչիկի Մարտիրոսյանին:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Արաիկ Հրաչիկի Մարտիրոսյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

3. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 03 հուլիսի 2025 թվականի «Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի 68/5 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված ավտոտնակը և դրանով զբաղեցված հողամասը Արաիկ Հրաչիկի Մարտիրոսյանին օտարելու մասին» թիվ 1563 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 սեպտեմբերի 2025 թվականի N 2087

ԱՆՉԱՓԱՀԱՄԱՆԵՐ ԴԱՎԻԹ ԳՈՒՐԳԵՆ ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ ԵՎ ՌԻՄԱ ԳՈՒՐԳԵՆ
ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գուրգեն Աղաջանյանի դիմումն իր անչափահաս երեխաներին պատկանող գույքն օտարելու մասին, նաև համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից 2025 թվականի սեպտեմբերի ...-ին տրված դրական եզրակացությունը (արձանագրություն թիվ 21, կետ...) քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածով, որոշում եմ.

Թույլատրել Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Համբարձումյան փողոցի թիվ 10 շենքի 10 բնակարանի բնակիչ Գուրգեն Օկտավիանոսի Աղաջանյանին (ծնված՝ 21.09.1982թ., անձնագիր՝ AS 0336305, տրված՝ 16.08.2018թ., 066-ի կողմից) օտարելու իր անչափահաս երեխաներին՝ Դավիթ Գուրգեն Աղաջանյանին (ծնված՝ 27.11.2016թ., ծննդյան վկայական՝ ԱԲ 547767, տրված՝ 29.11.2016թ., Վանաձոր ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից) և Ռիմա Գուրգեն Աղաջանյանին (ծնված՝ 30.04.2009թ., ծննդյան վկայական՝ ԱԱ 303994, տրված՝ 04.05.2009թ., ՔԿԱԳ Վանաձորի տ/բ-ի կողմից) պատկանող Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Համբարձումյան փողոցի թիվ 10 շենքի 10 բնակարանի բաժնեմասերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 02
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 սեպտեմբերի 2025 թվականի N 2088

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ՇԱՀՈՒՄՅԱՆՈՒՄ (Ծածկագիր: 06-084-0009-0032)
ԳՏՆՎՈՂ ԼՅՈՒԴՄԻԼԱ ԳՐԻԳՈՐԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ
ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ
ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լյուդմիլա Գրիգորի Գևորգյանի 10.07.2025թ. թիվ 02/9663 դիմումը, 25.04.1991թ. Լոռու մարզի Շահումյան համայնքում հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի թիվ 08 որոշումը, 12.07.2024թ. տրված հողատեղեկագրի քաղվածքի բնօրինակի պատճենը՝ վավերացված նոտարի կողմից, 18.06.2025թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 3484 (նոտարական ակտի կոդ: 763-20250618-84-9104921) վկայագիրը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման /249449/ քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 16-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Վանաձոր համայնքի գյուղ Շահումյանում (ծածկագիր: 06-084-0009-0032) գտնվող 0.069179 հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Վերականգնել Լյուդմիլա Գրիգորի Գևորգյանի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի գյուղ Շահումյանում (ծածկագիր: 06-084-0009-0032) գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 0.069179 հա մակերեսով հողամասի հողատեղեկագրի հիմքերը՝ համաձայն «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի հատակագծի:

3. Վանաձոր համայնքի գյուղ Շահումյանում (ծածկագիր: 06-084-0009-0032) գտնվող հողամասին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Շահումյան, 18-րդ փողոց, 29/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 սեպտեմբերի 2025 թվականի N 2089

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Կ. ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ 6/4
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՃԱՆԱԶՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՍՏԵՓԱՆ
ԱՐԱՄԱՅԻՍԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփան Արամայիսի Ասատրյանի 28.02.2024 թվականի թիվ 02/4139 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 11082025-06-0047 վկայականը, 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ որոշում եմ.

1. Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Կ. Դեմիրճյան փողոց 6/4 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 36.95քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերես՝ 36.67քմ) ավտոտնակ և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 36.95քմ մակերեսով հողամասը 10 տարի ժամկետով, վարձակալության իրավունքով տրամադրել Ստեփան Արամայիսի Ասատրյանին:

2. Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Ստեփան Արամայիսի Ասատրյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի վարձակալության իրավունքի պայմանագիր, ավտոտնակի 1.0քմ-ի համար ամսական վարձավճարի չափ սահմանելով 30 (երեսուն) դրամ, իսկ հողամասի 1.0քմ-ի համար ամսական 24 (քսանչորս) դրամ, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 սեպտեմբերի 2025 թվականի N 2090

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 41
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՄԱՅԱԿ ՀՈՎԱՏՓԻ
ՈՒՆԱՆՅԱՆԻ, ԳԱՅԱՆԵ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՈՒՆԱՆՅԱՆԻ ԵՎ ՆԵԼԼԻ
ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՈՒՆԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ
ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հմայակ Հովսեփի Ունանյանի լիազորված անձ՝ Հովսեփ Հովիկի Ունանյանի դիմումը և Նեյի Հովհաննեսի Ունանյանի դիմումը ով հանդիսանում է նաև՝ Գայանե Հովհաննեսի Ունանյանի լիազորված անձը/30.04.2025 թվականի թիվ 02/5943 դիմումը/ 11.10.2022թ. տրված թիվ 6498 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 594-20221011-90-6342345), 05.09.2024թ. տրված թիվ 5714 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 741-20240905-90-8304885), 21.07.2025 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 3725 (նոտարական ակտի կոդ: 741-20250712-84-9183756), թիվ 3726 (նոտարական ակտի կոդ: 741-20250712-84-9183758), թիվ 3727 (նոտարական ակտի կոդ: 741-20250712-84-9183750) և թիվ 3728 (նոտարական ակտի կոդ: 741-20250712-84-9183747) վկայագրերը, 07.05.1990 թվականին տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 17.07.2025թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-173/25 Ի եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի թիվ 41 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 350.0քմ մակերեսով հողամասին կից 299.7քմ մակերեսներով հողամասը, դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1963-1968թթ-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 649.7քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Հմայակ Հովսեփի Ունանյանի (2/3), Գայանե Հովհաննեսի Ունանյանի(1/6) և Նելլի Հովհաննեսի Ունանյանի(1/6) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի թիվ 41 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 350.0 քմ մակերեսով հողամասին կից 299.7 քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2. Ճանաչել Հմայակ Հովսեփի Ունանյանի (2/3), Գայանե Հովհաննեսի Ունանյանի(1/6) և Նելլի Հովհաննեսի Ունանյանի(1/6) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի թիվ 41 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 649.7 քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության շինությունների նկատմամբ (համաձայն շինությունների բնութագրի):

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի թիվ 41 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Երևանյան խճուղի, 39/2 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 03
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 սեպտեմբերի 2025 թվականի N 2091

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ
15 ՇԵՆՔԻ ԲԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ, ԵՎ
ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ,
ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմենակ Սարգսի Սարգսյանի 19.04.2024թ. թիվ 02/7412 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայությունների մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «ԱՐՄԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 13.10.2023 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 20232ZYRBG), 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Շինարարների փողոց թիվ 15 շենքի բակում գտնվող ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 18.0քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 17.05քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 18.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժնում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու վերաբերյալ:

5.Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի, Շինարարների փողոց թիվ 15 շենքի բակում գտնվող գտնվող ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Շինարարների փողոց, 15/1 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 03
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 սեպտեմբերի 2025 թվականի N 2092

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 24 ՀՈՒԼԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1742
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Միեր Հայկի Ավետյանի՝ ով հանդիսանում է Հայկ Կոլյայի Ավետյանի և Սեդա Հայկի Ավետյանի լիազորված անձը և Վարդիթեր Էրնեստի Դավոյանի 06.02.2023թ թիվ 02/3541 դիմումը, 10.01.2023թ թիվ 17 (նոտարական ակտի կոդ: 763-20230110-90-6580264) և 02.03.2023թ թիվ 707 (նոտարական ակտի կոդ: 455-20230302-79-6722976) լիազորագիրները Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 27022024-06-0015 և ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով Վարդիթեր Էրնեստի Դավոյանին Հայկ Կոլյայի Դավոյանին և Սեդա Հայկի Ավետյանին պատկանող անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 15082023-06-0057 վկայականները, 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 28 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 24 հուլիսի 2025 թվականի «Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք 1 -ին փողոց 44/2 հասցեում գտնվող հողամասը բնակելի տան ընդլայնման նպատակով որպես ընդհանուր համատեղ սեփականություն Հայկ Կոլյայի Ավետյանին, Սեդա Հայկի Ավետյանին, Վարդիթեր Էրնեստի Դավոյանին օտարելու մասին» թիվ 1742 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

Որոշման նախաբանում, որոշման 1-ին և 2-րդ կետերում «Հայկ Կոլյայի» բառերից հետո «Դավոյանի» բառը իր բոլոր հոլովածներով փոխարինել «Ավետյանի» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 սեպտեմբերի 2025 թվականի N 2093

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՂԱՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 104-59
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏԼՎՈՂ, ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՃԱՆԱԶՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ, ՊԱՐԻՍՊԸ ԵՎ ԴՐԱՆՑՈՎ ՋԲԱՂԵՑՎԱԾ
ՀՈՂԱՄԱՍԸ ՇՈՒՀԱՆԻԿ ՎՐՈՒՅՐԻ ՃՇՄԱՐԻՏՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ, ՎԱՆԱԶՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 15 ՄԱՐՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 499 ՈՐՈՇՈՒՄԸ
ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Շուշանիկ Վրույրի Ճշմարիտյանի 18.11.2022թ. թիվ 15567 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 14012021-06-0022 վկայականը, 29.11.2023թ Վանաձոր համայնքի ավագանու թիվ 46 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ, 34.2-րդ կետերով, 35-րդ կետի գ), դ) և ե) ենթակետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2021 թ փոտրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ**,

1. Վանաձոր քաղաքի Աղայան փողոց թիվ 104-59 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 25.51քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 18.54քմ) ավտոտնակը 50230 (հիսուն հազար երկու հարյուր երեսուն) դրամով, 1.43քմ մակերեսով պարիսպը 5640 (հինգ հազար վեց հարյուր քառասուն) դրամով և դրանցով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 47.0քմ մակերեսով հողամասը 208770 (երկու հարյուր ութ հազար յոթ հարյուր յոթանասուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Շուշանիկ Վրույրի Ճշմարիտյանին:

2. Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Աղայան փողոց թիվ 104-59 հասցեում գտնվող ավտոտնակին և պարիսպին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Աղայան փողոց, 104/59 ավտոտնակ:

3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Շուշանիկ Ճշմարիտյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի, պարսպի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

4.Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 15 մարտի 2021 թվականի «Վանաձոր քաղաքի Աղայան փողոց թիվ 104-59 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված ավտոտնակը, պարիսպը և դրանցով զբաղեցված հողամասը Շուշանիկ Վրույրի ճշմարիտյանին օտարելու մասին» թիվ 499 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



 Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 03
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 սեպտեմբերի 2025 թվականի N 2094

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Ս. ԹԵՎՈՍՅԱՆ ՓՈՂՈՑ 2/14
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԷԴԻԿ ԱՆԱՏՈՂԻԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ
ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՎԵՅ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ
ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էդիկ Անատոլիի Թումանյանի 30.07.2025 թվականի թիվ 02/10716 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 03072025-06-0009 վկայականը, «ԿԱՐՏՈԳՐԱՖ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագծերը և եզրակացությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ որոշում եմ.

Տարանջատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Ս. Թևոսյան փողոց 2/14 հասցեում գտնվող Էդիկ Անատոլիի Թումանյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասը և դրա վրա գտնվող շինությունները՝ համաձայն «ԿԱՐՏՈԳՐԱՖ» ՍՊԸ-ի կողմից տրված թիվ 1, 2, 3, 4, 5 և 6 հատակագծերի և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 03072025-06-0009 վկայականի:

ա. 0.09821 հա մակերեսով հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ս. Թևոսյան փողոց, 7/7 հողամաս:

բ. 0.05905 հա մակերեսով հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ս. Թևոսյան փողոց, 7/6 հողամաս:

գ. 0.03103 հա մակերեսով հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ս. Թևոսյան փողոց, 7/5 հողամաս:

դ. 0.02907 հա մակերեսով հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ս. Թևոսյան փողոց, 7/4 հողամաս:

ե. 0.03742 հա մակերեսով հողամասին և նրա վրա գտնվող 7.95 քմ մակերեսով պարիսպին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ս. Թևոսյան փողոց, 7/3 պարիսպ:


զ. 0.03139 հա մակերեսով հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ս. Թևոսյան փողոց, 7/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 03
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 սեպտեմբերի 2025 թվականի N 2095

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱԹՈՒՄԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 15
ՇԵՆՔԻ ԲԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ, ԵՎ
ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ
ՆԿԱՏՄԱՍԻ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ,
ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լոռուի Թեմայի Սուրբապայանի լիազորված անձ՝ Հակոբ Թեմայի
Սուրբապայանի 06.11.2023 թ. թիվ 02/19305 դիմումը, 13.03.2023 թվականի թիվ 1239
լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 763-20230313-90-6746371), անշարժ գույքերի
հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող
կազմակերպությունների եզրակացությունները, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿ» ԱԶ-ի
կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ՀՀ
կադաստրի կոմիտեի կողմից 09.11.2023թ. թվականին տրված հաշվառման (չափագրման)
տվյալների մուտքագրման տեղեկանքը (ծածկագիր: 20233PQSMU), 26.08.2025
թվականի «Վանաձոր նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական
վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 92/25ա եզրակացությունը, 13.05.2024թ. Վանաձոր համայնքի
ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ
731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն
որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի
թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր
քաղաքի Բաթումի փողոց թիվ 15 շենքի բակում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական
օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին
համապատասխանող 44.35քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 37.42քմ)
ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային
օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 26.86քմ մակերեսով
հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական
նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման,
հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու

մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնական կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնական կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքով օտարելու վերաբերյալ:

5.Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Բաթումի փողոց թիվ 15 շենքի բակում գտնվող ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Բաթումի փողոց, 15/25 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 03
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 սեպտեմբերի 2025 թվականի N 2096

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 02 ՀՈՒԼԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1537
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 31.07.2025 թվականի թիվ 02/10768 դիմումը, 25.07.2025 թվականի ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի /սահմանաթական/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-25072025-06-0136 որոշումը, «Գասպար Վեքիլյան» ԱԶ-ի կողմից տրած հողամասի նոր հատակագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 02 հուլիսի 2025 թվականի « Համայնք Վանաձոր Վանաձոր քաղաքի Ֆիդայիների /Նախկին Կալինի/ փողոց թիվ 25 հասցեի բնակելի տանը կից հողամասի և շինությունների նկատմամբ Կարեն Սուրենի Մխիթարյանի սեփականության իրավունքը ճանաչելու, հողամասի ճշտված սահմանները հաստատելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1537 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1.Որոշման նախաբանում «250.0քմ դրան կից 85.76 քմ» բառերը փոխարինել «250.քմ դրան կից 79.9» բառերով:

2.Որոշման նախաբանում «հողամասի մակերեսը փաստացի կազմում է 335.76քմ,որից 72.58քմ մակերեսով հողամասը գտնվում է ընդհանուր օգտագործման տակ կից տնատիրությունների հետ» բառերը փոխարինել «հողամասի մակերեսը փաստացի կազմում է 329.90 քմ,որից 66.7քմ մակերեսով հողամասը գտնվում է ընդհանուր օգտագործման տակ» բառերով:

3.Որոշման 1-ին կետում «250.0քմ մակերեսով հողամասին կից 85.76քմ» բառերը փոխարինել «250.0քմ մակերեսով հողամասին կից 72.58քմ» բառերով:

«335.76 քմ մակերեսով հողամասից նշագծված 72.58քմ մակերեսով հողամասը գտնվում է ընդհանուր օգտագործման տակ կից տնատիրությունների հետ:» բառերը փոխարինել «329.90 քմ մակերեսով հողամասից նշագծված 66.7քմ մակերեսով հողամասը գտնվում է ընդհանուր օգտագործման տակ Ֆիդայիների 25 պայմանական հասցեի սեփականատեր Լևոն Շավարշի Սաղաթեյանի հետ:

4.Որոշման 2-րդ կետում «355.76 քմ » բառերը փոխարինել «329.90» բառերով:

5. Որոշման 3-րդ կետում «355.76 քմ » բառերը փոխարինել «329.90» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

2025թ. սեպտեմբերի 03
ք.Վանաձոր



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 սեպտեմբերի 2025 թվականի N 2097

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔԻ 06-031-0101-0004 ԾԱԾԿԱԳՐՈՎ
ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գագիկ Ֆումանի Քարհանյանի, Նելլի Գառնիկի Դարբինյանի, Աննա Գագիկի Սաքանյանի 06.08.2024թ. թիվ 02/13446 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 2028213 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 101 հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ որոշում եմ.

Վանաձոր համայնքի Գուգարք գյուղի 06-031-0101-0004 ծածկագրով, 0,0716 հա մակերեսով տնամերձ հողամասը ճանաչել Վանաձոր համայնքի սեփականություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ սեպտեմբերի 04
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 սեպտեմբերի 2025 թվականի N 2098

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ՓՈՂՈՑԻ
ՎԵՐՋՆԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ
ԴՐԱՆՈՎ ԶՔԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ,
ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ
ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հոկտեմբերի Անդրանիկի Գալստյանի 11.12.2023 թվականի թիվ 02/21950 դիմումը, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին թիվ 7-Լ որոշումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 09.12.2023 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (ծածկագիր: 2023YTDQDN), 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731 Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ և 43.1 կետերով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ և 43.1 կետերով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Ուսանողական փողոցի վերջնամասում գտնվող ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 42.3քմ արտաքին մակերեսով (ներքին մակերես՝ 38.9քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 42.3քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Փոխել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք Ուսանողական փողոցի վերջնամասում գտնվող 0.00423հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ խառը կառուցապատման հողերից բնակելի կառուցապատման հողերի:

3. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի, և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

5. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը, և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

6. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Ուսանողական փողոցի վերջնամասում գտնվող ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք Վանաձոր քաղաք, Ուսանողական փողոց, 11/16 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 04
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Ածի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 սեպտեմբերի 2025 թվականի N 2099

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՄԱՌԱՆՈՑԱՅԻՆ 1-ԻՆ ՓՈՂՈՑ
ԹԻՎ 36 (ՊԱՅՄԱՆԱԿԱՆ) ՀԱՍՅԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՄԱՆ ՀԱՅԿԱՍԱՐԻ ՔԱՌՅԱՆԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ
ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արման Հայկասարի Քառյանի 01.07.2024 թվականի թիվ 02/11270 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղաքացի, 28.08.2025 թվականի թիվ 6067 հայտարարությունը (նոտարական ակտի կոդ: 763-20250828-66-9338514), 28.08.2025 թվականի թիվ 6066 հայտարարությունը (նոտարական ակտի կոդ: 763-20250828-66-9338534), 28.08.2025 թվականի թիվ 6068 հայտարարությունը (նոտարական ակտի կոդ: 763-20250828-66-9338426), «Գասպար Վեքիլյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը, իսկադրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 15.08.2025թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1- 198/ 25 Ի եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Ամառանոցային 1-ին փողոց թիվ 36 (պայմանական) հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 397,6 քմ մակերեսով հողամասը, դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1996 թվականին, դրա զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 397.6քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով՝ որոշում եմ.

1. Ճանաչել Արման Հայկասարի Քառյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր քաղաքի Ամառանոցային 1-ին փողոց թիվ 36 (պայմանական) հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 397.6 քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ

2. Հաստատել Վանաձոր համայնք Վանաձոր Ամառանոցային 1-ին փողոց թիվ 36 (պայմանական) հասցեում գտնվող բնակելի տան զբաղեցրած 397.6 քմ մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի: Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ամառանոցային 1-ին փողոց, 36 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 04
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 սեպտեմբերի 2025 թվականի N 2100

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱԹՈՒՄԻԻ ՓՈՂՈՑ 17/11
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՃԱՆԱԶՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐՏԱԿ
ՍԱՀՄԱՅԻ ԲԱՅՐԱՄՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արտակ Սաշայի Բայրամյանի 25.09.2023 թվականի թիվ 02/16345 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 02072025-06-0025 վկայականը, 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Բաթումիի փողոց 17/11 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 69.85քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 65.02քմ) ավտոտնակը 137540 (հարյուր երեսունյոթ հազար հինգ հարյուր քառասուն) ՀՀ դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 40.86քմ մակերեսով հողամասը 181500 (հարյուր ութսունմեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Արտակ Սաշայի Բայրամյանին:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Արտակ Սաշայի Բայրամյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 սեպտեմբերի 2025 թվականի N 2101

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԻ ԽՃՈՒՂԻ 15/2
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՃԱՆԱԶՎԱԾ ԾԱԾԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՆԱՐԵԿ
ԱՐՏԱԿԻ ԽԱՌԱՏՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նարեկ Արտակի Խառատյանի 14.12.2023 թվականի թիվ 02/22334 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 31072025-06-0050 վկայականը, 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33.1-րդ կետի բ) ենթակետով, 33.2-րդ և 34.2-րդ կետերով, 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ որոշում եմ.

1. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Շիրակի խճուղի 15/2 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 67.2քմ ընդհանուր մակերեսով հասարակական նշանակության ծածկը 1011840 (մեկ միլիոն հարյուր տասնութ հազար քառասուն) ՀՀ դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 372.6քմ մակերեսով հողամասը, որից 134,4 քմ մակերեսով հողամասը կադաստրային արժեքով՝ 388080 (երեք հարյուր ութսունութ հազար ութսուն) ՀՀ դրամով, իսկ 238.2քմ (372.6-134.4) մակերեսով հողամասը կադաստրային արժեքի եռապատիկի չափով՝ 2063410 (երկու միլիոն վեց հարյուր երեսունչորս հազար տասը) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Նարեկ Արտակի Խառատյանին:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Նարեկ Արտակի Խառատյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ծածկի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հաշվառման, հարկապարհման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 սեպտեմբերի 2025 թվականի N 2102

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 76
ՇԵՆՔԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ
ԱՎՏՈՏՆԱԿԻ, ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ
ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լևոն Արմենի Պետրոսյանի 04.12.2023թ.թիվ 02/21517 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «ԿԱՐՏՈԳՐԱՖ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 01.12.2023թ. թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023XX9GZN), 02.07.2025 թվականի «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 75/25ա եզրակացությունը, 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Երևանյան Խճուղի թիվ 76 շենքի հարևանությամբ գտնվող ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 28.56քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 26.28քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 28.56քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված

ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքով օտարելու վերաբերյալ:

5. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Երևանյան Խճուղի թիվ 76 շենքի հարևանությամբ գտնվող ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Երևանյան Խճուղի, 76/13 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 04
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 սեպտեմբերի 2025 թվականի N 2103

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 28 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ
2032 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 28 օգոստոսի 2025 թվականի 2032 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով՝ որոշում եմ.

Վանաձոր համայնքի ղեկավարի 28 օգոստոսի 2025 թվականի «Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Զաքարյան փողոց 8-32 հասցեում գտնվող հողամասի Վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգելու մասին » թիվ 2032 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1.Որոշման 1-ին կետում «07.08.2028 թվականը » բառերը փոխարինել հետևյալ «07.08.2035 թվականը» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 04
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 սեպտեմբերի 2025 թվականի N 2104

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 26 ՀՈՒՆԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1488
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սևիլյա Արարատի Ալավերդյանի 14.08.2025թ. թիվ 02/11500 դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 26 հունիսի 2025 թվականի թիվ 1488 որոշումը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 12/08/2025 թվականին տրված գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-12082025-06-0046 որոշումը, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 26 հունիսի 2025 թվականի «Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Գործարանային (նախկին Ժդանով-1 թիվ 16) 2-րդ փակուղի թիվ 16 (պայմանական) հասցեի բնակելի տանը կից հողամասի և շինությունների նկատմամբ Սևիլյա Արարատի Ալավերդյանի սեփականության իրավունքը ճանաչելու, հողամասի ճշտված սահմանները հաստատելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1488 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները.

1. Որոշման նախաբանը «Ղեկավարվելով» բառից հետո լրացնել «ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով» բառերով.

2. Որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2-րդ կետով.

«2. Ճանաչել Սևիլյա Արարատի Ալավերդյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Գործարանային (նախկին Ժդանով-1 թիվ 16) 2-րդ փակուղի թիվ 16 (պայմանական) հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 595.0 քմ մակերեսով հողամասին կից 300.0 քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ՝ համաձայն «ԿԱՐՏՈԳՐԱՖ» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների բնութագրի»:

3. Որոշման «2-րդ» և «3-րդ» կետերը կարդալ հետևյալ հաջորդականությամբ որպես «3-րդ» և «4-րդ» կետեր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 սեպտեմբերի 2025 թվականի N 2105

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ (ԱԹԱԲԵԿՅԱՆ) ՍԱՐՈՅԱՆ
ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 34 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ
ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարտ Սամսոնի Հովհաննիսյանի 11.07.2025 թվականի թիվ 9763 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1698234 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 07.02.2025թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 617 վկայագիրը(նոտարական ակտի կոդ: 763-20250207-84-8738550) ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝
որոշում եմ.

Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի (Աթաբեկյան) Սարոյան փողոցի թիվ 34 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Վ. Սարոյան փողոց, 34/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 04
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 սեպտեմբերի 2025 թվականի N 2106

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 12 ՀՈՒՆԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1358
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սեյրան Գրիգորի Բաղրամյանի 14.08.2025 թվականի թիվ 02/11558 դիմումը, 05.08.2025 թվականի ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-05082025-06-0042 որոշումը, 17.07.2025 թվականի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրը :2025XXRUCE), 24.12.2023 թվականի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրը :2023LKHK85), «Արսեն Իսահակյան Ռուդիկ» ԱԶ-ի կողմից տրված շինությունների հատակագծերը և բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 27-րդ, 28-րդ, 31-րդ կետերով, 32-րդ կետի բ) և գ) ենթակետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 12 հունիսի 2025 թվականի «Համայնք Վանաձոր Վանաձոր քաղաք Շիրվանզադեի 8 հասցեում գտնվող, Սեյրան Գրիգորի Բաղրամյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնակամ կառուցված շինությունների օրինականացնելու մասին» թիվ 1358 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները.

1. Որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ և 4-րդ կետերով.

«3. Ճանաչել օրինական Սեյրան Գրիգորի Բաղրամյանի սեփականության իրավունքով պատկանող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, Վանաձոր քաղաքի Շիրվանզադեի թիվ 8 հասցեում գտնվող բնակելի տան մեջ կատարած թվով 19 ինքնակամ ձևափոխումները:

4. Սույն որոշման 3-րդ կետում նշված թվով 19 ինքնակամ ձևափոխումների օրինականացման համար սահմանված վճարը՝ 71649 (յոթանասունմեկ հազար վեց հարյուր

